

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՎԱՆԻՆԵ ԺՈՐԱՅԻ

Իրավաբանական պատասխանատվության հիմնախնդիրը
սահմանադրական և օրենսդրական փոփոխությունների համատեքստում
(համատեսական վերլուծություն)

ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2021

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

ОВСЕПЯН ВАНИНЕ ЖОРАЕВНА

Проблемы юридической ответственности в контексте конституционных и
законодательных изменений
(общетеоретический анализ)

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по
специальности 12.00.01 - «Теория и история государства и права, история государственных
и правовых учений»

Ереван-2021

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության,

սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ **իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Հ. Մ. Ստեփանյան**


Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Գ. Հ. Սաֆարյան**
**իրավաբանական գիտությունների
թեկնածու, Հ. Զ. Սարգսյան**

Առաջատար կազմակերպություն՝ **«Եվրասիա» միջազգային համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021թ. հուլիսի 8-ին ժամը 15:00-ին, Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմին 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գիտական աշխատողների գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2021թ. մայիսի 26-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
Իրավաբանական գիտությունների թեկնածու  **Գ. Հ. Տափարյան**

Тема диссертации утверждена в Институте философии, социологии и права НАН РА


Научный руководитель: доктор юридических наук, профессор **О. М. Степанян**
Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **Г. Г. Сафарян**
кандидат юридических наук **О. З. Саргсян**

Ведущая организация: **Международный университет “Евразия”**

Защита состоится 8 июля 2021 года, в 15:00 часов, на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (г. Ереван, 0051, Овсепя Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки РАУ

Автореферат разослан 26 мая 2021г.

Ученый секретарь специализированного совета
кандидат юридических наук  **Ջ. Ա. Այրապետյան**

Աշխատանքի ընտանուր բնութագիրը

Ատենախոսական հետազոտության թեմայի արդիականությունը: 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին տեղի ունեցած ոչ բռնի, խաղաղ հեղափոխության արդյունքում Հայաստանի Հանրապետությունում կատարվել և կատարվում են արմատական փոփոխություններ պետական շինարարության ոլորտում, այդ թվում և օրենսդրության համակարգում: Այս առումով թեմայի հետազոտությունը խիստ արդիական է այն տեսանկյունից, որ իրավաբանական պատասխանատվությունն իրենից ներկայացնում է սոցիալական պատասխանատվության հատուկ տարատեսակ, որը դրսևորվում է մարդկային կյանքի զանազան ոլորտներում, այդ թվում հասարակական-քաղաքական և իրավական համակարգերում:

Գիտական հետազոտություններում իրավաբանական պատասխանատվությունը ներկայացվում է իբրև անբաժանելիորեն կապված պետության, իրավունքի նորմերի, քաղաքացիների ու նրանց միավորումների պարտավորության և հակաիրավական վարքի հետ: Պետությունը՝ ընդունելով իրավունքի նորմերը, սահմանում է սուբյեկտների իրավաբանական պատասխանատվությունն անկախ իրենց կամքից ու ցանկությունից, այն կրում է պետական հարկադրական բնույթ:

Պետական հարկադրանքը՝ առանձնահատուկ ներգործություն է մարդկանց վարքագծի նկատմամբ, որը հիմնված է դրա կազմակերպված ուժի վրա: Մակայն դա ոչ միայն պարզապես պետական հարկադրանք է, այլ՝ հարկադրանք իրավունքի նորմերի կատարման նպատակով: Այդպիսի հարկադրանքի բնորոշ առանձնահատկությունը նրանում է, որ այդ գործունեությունն ինքնին խստորեն կարգավորված է օրենքով, ունի իր իրավական ռեժիմները:

Բացի նշվածից *թեմայի հետազոտության արդիականությունը* պայմանավորված է հատկապես հասարակական հարաբերություններում և պետական կառավարման ոլորտում իրավախախտումների արդյունավետ կանխարգելմամբ և օրինականության պահպանման գործում իրավաբանական պատասխանատվության որոշիչ դերակատարումով:

Իրավաբանական պատասխանատվությունը՝ ցանկացած իրավական համակարգի կարևոր ինստիտուտն է, իրավունքի գլխավոր հատկանիշներից մեկը, դրա գործադրության անհրաժեշտ տարրը: Այս առումով, իրավաբանական պատասխանատվության խնդիրը զբաղեցնում է իրավունքի ընդհանուր տեսության և

իրավաբանական ճյուղային գիտությունների մեջ կենտրոնական տեղերից մեկը:

Թեմայի հետազոտության արդիականությունը պայմանավորված է նաև իրավական գիտության մեջ իրավաբանական պատասխանատվության որոշ խնդիրների վիճելի բնույթով: Չնայած քննարկվող հիմնախնդրի ավելի քան կես դար պատմությանը, մինչև այժմ բացակայում է կարծիքների ընդհանրությունը իրավաբանական պատասխանատվության հասկացության, գործառույթների բնույթի, սկզբունքների, դասակարգման չափանիշների, ինչպես նաև հարակից իրավական երևույթների հետ հարաբերակցության խնդիրները: Այս խնդիրների գիտականորեն հիմնավորված լուծումը թույլ կտա պարզել իրավաբանական պատասխանատվության բնույթը, ինչը վերջին հաշվով, կազդի օրինականության և իրավական կարգի ապահովման որակի վրա:

Վերոնշյալն է պայմանավորված թեմայի հետազոտության արդիականությունը:

Հետազոտության թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Իրավաբանական պատասխանատվությունը հանդիսանում է իրավագիտության առավել խնդրահարույց կաթեգորիաներից մեկը: Իրավաբանական պատասխանատվության նորմատիվ սահմանումներն ազգային իրավունքի համակարգում բացակայում են, գիտական սահմանումները բավականաչափ բազմաբնույթ ու հակասական են: Միննույն ժամանակ այդ ինստիտուտն օգտագործում են իրավունքի գրեթե բոլոր ճյուղերն ու ենթաճյուղերը սահմանադրական, վարչական, ֆինանսական, ընտրական, քրեական, քաղաքացիական և այլն, սակայն ամեն տեղ՝ յուրովի: Բացահայտված են մի շարք վիճելի խնդիրներ, ուստի առաջանում է իրավաբանական պատասխանատվության հիմնախնդիրների տեսական բազմակողմանի հետազոտության անհրաժեշտություն:

Անհրաժեշտ է նշել, որ վերջին տարիներին հրատարակվել են հայրենական և արտասահմանյան հեղինակների աշխատությունների որոշակի քանակություն, որոնցում իրավունքի տեսության բազմատեսակ հիմնախնդիրների շարքում լուսաբանվում են նաև իրավաբանական պատասխանատվության առանձին հիմնախնդիրներն ու հարցադրումները¹:

¹ Տե՛ս **Բարսեղյան Տ.Վ.** Գույքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիոն և արդիական հիմնահարցերը (Տեսապատմական և գիտագործնական հետազոտություն): Ատենախոսություն իրավ. գիտ. դոկտորի գիտական աստիճանի համար: Երևան, 2006; **Համբարձումյան Ա.Դ.** Իրավաբանական պատասխանատվությունը ազգային իրավական համակարգում: Մեղմագիր իրավ. գիտ. թեկն. գիտական աստիճանի համար: Երևան, 2015; **Хачатрян А.М.** Актуальные проблемы теории и практики юридической ответственности. Автор дисс. ... канд. юрид. наук. Ереван, 2014; **Хачатуров Р.Л., Липинский Д.А.** Общая

Ներքոնշյալ աշխատություններում խոսքը գնում է հիմնականում իրավախախտումների համար պատասխանատվության ընդհանուր իրավական հիմքերի մասին, սակայն իրավաբանական պատասխանատվության ժամանակակից հիմնախնդիրների հատուկ մենագրական հետազոտությունները դրական և հետընթաց պատասխանատվության և դրանց իրականացման կառուցակարգերի վերաբերյալ բացակայում են: Այս ամենը իրավաբանական պատասխանատվության համալիր և համակարգային հետազոտության խնդիրը դարձնում է արդիական, ներառյալ՝ օրենքի գերակայության ամրապնդումը, իրավաբանական պատասխանատվության անխուսափելիությունը, պատասխանատվությունն ուժեղացնող նոր օրենսդրական ակտերի նախագծերի մշակման:

Այս առումով գտնում ենք, որ սույն հետազոտությունը ոչ միայն կլրացնի վերոնշյալ զիտնականների աշխատությունների շարքը, այլև ինքը կհանդիսանա որոշակի գիտական հենք՝ հետագա ուսումնասիրողների համար:

Հետազոտության տեսական հենքը. Սույն ատենախոսական աշխատանքի համար որպես տեսական հենք են ծառայել խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանի հայրենական ու արտասահմանյան զիտնականների՝ Ն. Ապիյանի, Ա. Թովմասյանի, Լ. Օհանյանի, Ս.Ս Ալեքսենի, Ն.Գ. Ալեքսանդրովի, Մ.Ի. Բայտինի Բ.Տ. Բազիլովի Ս.Ն. Բրատուսի, Վ.Ս. Գորշենի, Յ.Ա. Դենիսովի, Վ.Ն. Կուրյավցևի, Ս.Ն. Կոժեվնիկովի Օ.Է. Լեյստի, Ն.Ի. Մատուզովի, Ն.Ս. Մալեինի, Ա.Ի Պետելինի, Տ.Ն. Ռադկոնի, Ի.Ս Սամոշենկոյի, Մ.Ս. Ստրոգովիչի, Վ.Ա. Տարխովի, Ա.Ս. Շաբուրովի, Մ.Խ. Ֆարուշկինի, Ֆ.Ն. Ֆատկուլինի, Ե.Վ. Չերնիխի և այլոց աշխատություններում: Խորհրդային շրջանում ճյուղային իրավաբանական պատասխանատվության խնդիրներն իրենց արտացոլումն են գտել Ս.Ա. Ավագյանի, Ջ.Ա. Աստեմիրովի, Ն.Ա. Բոբրովայի, Մ.Ի. Բրազինսկու, Կ.Ս. Բելսկոյի, Ի.Ա. Գալազանի, Վ.Ա. Ելեոնսկու, Տ.Դ. Զրաժնսկու, Օ.Ս. Իոֆֆեի, Ն.Ս.

теория юридической ответственности. СПб, 2007; **Липинский Д.А.** Проблемы юридической ответственности. СПб, 2003; **Лазарев В.В., Липень С.В.** Теория государства и права. М.: Спарк, 2000, էջ 340-360; **Нерсисянц В.С.** Проблемы общей теории права и государства. М.: НОРМА, 2014, էջ 465-498; **Алексеев С.С.** Восхождение к праву. Поиски и решения. М.: НОРМА, 2001, էջ 415-447; **Базылев Б.Т.** Об институте юридической ответственности // Советское государство и право, 1975, N 1, էջ 110-115; Նույնի Юридическая ответственность (теоретические вопросы), Красноярск, 1985, էջ 33-64; **Керимов Д.А.** Методология права: предмет, функции, проблемы философии права. М.: Аванта-Плюс, 2001, էջ 27-44; **Лейст О.Э.** Санкции и ответственность по советскому праву (теоретические проблемы). М., 1981, էջ 15-194; **Малеин Н.С.** Современные проблемы юридической ответственности // Государство и право, 1994, N 6, էջ 23-22; **Магузов Н.И.** Правовая система и личность, Саратов, 1997, էջ 244-283:

Կրոպաչովի, Ի.Յ. Կազաչենկոյի, Ն.Ա. Օգուրցովի, Վ.Վ. Պոխամելկինի, Վ.Ս. Պրոխորովայի, Ե.Ա. Սուխանովի, Վ.Գ. Սմիրնովի, Յ.Ն. Ստարիլովի, Պ.Բ. Ստավիսկու, Ա.Ն. Տարբազանի, Ն.Ա. Չեչինայի, Պ.Ս. Էլկինդի և այլոց աշխատությունները:

Հետխորհրդային իրավագիտության մեջ իրավաբանական պատասխանատվության տարբեր տեսական և գործնական խնդիրներ հետազոտության են ենթարկվել Ս.Ս. Ավետիսյանի, Ն.Ա. Ապիյանի, Գ.Բ. Դանիելյանի, Գ.Ս. Ղազինյանի, Ա.Գ. Հովսեփյանի, Ա.Ա. Թամազյանի, Ս.Ա. Ծաղիկյանի, Ա.Ս. Խաչատրյանի, Ռ.Գ. Պետրոսյանի, Լ.Զ. Թադևոսյանի, Ա.Ս. Ղամբարյանի, Ա.Ա. Անֆյորովի, Մ.Ի. Բայտինի, Վ.Ս. Վեդյախինի, Ն.Վ. Վիտրուկի, Ա.Ա. Գոզինի, Ե.Վ. Գրիգունովայի, Ա.Վ. Զարիցկու, Ա.Ա. Իվանովի, Ս.Ա. Կոմարովի, Ս.Լ. Կոնդրատևայի, Ա.Ռ. Կոռնիլովայի, Վ.Ա. Կիպուխինայի, Ա.Բ. Աավրենտևի, Տ.Ա. Մալաշի, Մ.Բ. Միրոնենկոյի, Ա.Ս. Մորդովցովի, Վ.Ս. Ռոմանովի, Ի.Ն. Սենյակինի, Մ.Պ. Տրոֆիմովայի, Ի.Ն. Տիխոնենկոյի, Ա.Ս. Շաբուրովի, Տ.Բ. Շուբինայի, Մ.Դ. Շինդյապինայի, Ա.Պ. Չիրկովի, Ռ.Լ. Խաչատրովի, Ռ.Գ. Յագուբյանի և այլոց աշխատանքներում:

Հեղինակը հատուկ ուշադրություն է դարձրել վերջին տարիներին մեզանում պաշտպանված դոկտորական և թեկնածուական ատենախոսություններին, որոնք նույնպես սույն աշխատանքի համար ունեն ինչպես տեսական, այնպես էլ մեթոդաբանական նշանակություն²:

Ամեննին էլ չնվազեցնելով խորհրդային և հետխորհրդային շրջանների գիտական աշխատանքների նշանակությունը, պետք է նշել, որ դրանցում դիտարկվել է իրավաբանական պատասխանատվության առանձին տեսակը կամ ընդհանուր տեսական ասպեկտներից որոշները:

Այս առումով, սույն ատենախոսական հետազոտությունը աչքի է ընկնում հարցադրումների նորարարությամբ և հիմնախնդիրների հետազոտության համապարփակությամբ և համակողմանիությամբ:

Հետազոտության մեթոդաբանական հիմունքները: Սույն թեկնածուական ուսումնասիրությունը իրականացնելիս օգտագործվել է գիտական ճանաչության համընդհանուր դիալեկտիկական մեթոդը՝ որպես իրավաբանական

² Տե՛ս **Բարսեղյան Տ.Կ.** Գույքային պատասխանատվության ինստիտուտի էվոլյուցիան և սոցիալական հիմնահարցերը: Ատենախոսություն: **Хачатрян А.М.** Актуальные проблемы теории и практики юридической ответственности: дис. ... канд. юрид. наук. Ереван, 2014:

պատասխանատվության օբյեկտիվ և բազմակողմանի ճանաչման հիմնական միջոց, որի տեսանկյունից, ուսումնասիրության օբյեկտը և առարկան դիտարկվում են համալիր և համակարգված եղանակով այլ երևույթների հետ փոխազդման և զարգացման մեջ: Դիալեկտիկական մեթոդի վրա են հիմնված ընդհանուր գիտական և մասնավոր մեթոդները: Լայնորեն կիրառվել են իրավաբանական և գործառույթային մեթոդները, որոնց շնորհիվ բացահայտվել են իրավական պատասխանատվության էությունը, առանձնահատկությունները և զարգացման միտումները ազգային իրավական համակարգում: Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են նաև մասնավոր գիտական՝ համեմատական-իրավական, ձևական-տրամաբանական, կառուցվածքային-համակարգային, իրավաբանական վերլուծության մեթոդները:

Նշված մեթոդների և եղանակների կիրառման շնորհիվ իրականացվել են հետազոտության արդյունքում ստացված ընդհանրացումները, եզրակացությունները, որոնք կարող են նպաստել իրավակիրառ գործունեության բարելավման և ազգային օրենսդրության կատարելագործման համար:

Հետազոտության նորմատիվ իրավական և փորձարարական հիմքերը: Սույն ատենախոսության համար որպես իրավական և փորձարարական հիմքեր են հանդիսացել՝ ՀՀ Սահմանադրությունը, գործող օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկայի նյութերը:

Ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Ուսումնասիրության օբյեկտն է վերհանել և մշակել իրավաբանական պատասխանատվության խնդրահարույց տեսական և գործնական հիմունքները:

Ուսումնասիրության առարկան է իրավաբանական պատասխանատվության հայեցակարգերը, մոտեցումները, կաթեգորիաները, որոնք բացահայտում են իրավական պատասխանատվության էությունը, առանձնահատկությունները գործառույթային հարաբերությունները և իրավաբանական պատասխանատվության իրականացման կառուցակարգերը, այդ թվում տեղեկատվական-որոնողական էլեկտրոնային համակարգը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Սույն ատենախոսական աշխատանքի նպատակն է իրավաբանական պատասխանատվության տեսական և կիրառական հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունը:

Դրված նպատակին հասնելու համար հեղինակը փորձել է լուծել հետևյալ **խնդիրները**.

- մշակել իրավաբանական պատասխանատվության ընդհանուր գիտական հասկացությունը և իրավաբանական պատասխանատվության ընդհանուր հայեցակարգը,

- բացահայտել իրավաբանական պատասխանատվության դերը իրավունքի բոլոր սուբյեկտների օրինական վարքագիծն ապահովելու մեխանիզմում,

- մշակել իրավաբանական պատասխանատվության իրականացման կառուցակարգային մոտեցումները,

- սահմանել իրավաբանական պատասխանատվության իրավահարաբերությունների բնույթը և առանձնահատկությունները, որոնց մեջ իրականացվում է կամավոր և պետական-հարկադրական պատասխանատվությունը, բացահայտել իրավական պատասխանատվության իրավահարաբերությունների օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները,

- վերլուծել իրավական պատասխանատվության իրականացման ժամանակակից կառուցակարգերը, դրանց կիրառման առանձնահատկությունները,

- բացահայտել իրավական պատասխանատվության նոր տեսակների սահմանման հիմնական խնդիրները և չափանիշները,

- մշակել գիտականորեն հիմնավորված առաջարկություններ՝ գործող օրենսդրության կատարելագործման և իրավակիրառ պրակտիկայի բարելավման ուղղությամբ,

- ներկայացնել հեղինակային՝ «տեղեկատվական-որոնողական էլեկտրոնային համակարգի» հայեցակարգի հիման վրա մշակված ձևաչափը:

Հետազոտության գիտական նորույթը: Սույն թեկնածուական աշխատանքի գիտական նորույթը կայանում է իրավաբանական պատասխանատվության համակարգային հետազոտության մեջ, որի արդյունքում բացահայտվում է իրավաբանական պատասխանատվության էությունը, բնութագրական հատկանիշները, առանձին տեսակների առանձնահատկությունները:

Սահմանադրական բարեփոխումների և դրա հիման վրա փոփոխված օրենսդրության հիմքի վրա, ժամանակակից հասարակական հարաբերությունների իրավակարգավորման պայմաններում բացահայտվում է իրավաբանական

պատասխանատվության սոցիալական նշանակությունը և իրավակարգավորումների համակարգում իրավաբանական պատասխանատվության դերակատարումը՝ իրավաօրինականության պահպանության և իրավակարգի ամրապնդման հարցերում:

Ատենախոսական աշխատանքի ամբողջ բովանդակության շեշտադրումն է իրավաբանական պատասխանատվության ընդհանուր տեսական հայեցակարգի մշակումը, որպես ամբողջական իրավական երևույթ, որն ունի (կամավոր) դրական և պետական-հարկադրական (նեգատիվ) արտահայտման ձևեր, որոնք իրականացվում են կարգավորող, կանխարգելիչ վերականգնող, պատժիչ և դաստիարակչական գործառույթներ և իրացվում են կարգավորող և պահպանողական իրավահարաբերություններում:

Ատենախոսական աշխատանքում համակարգվում և ընդհանրացվում են տարբեր հայեցակարգեր իրավաբանական պատասխանատվության ինչպես ճյուղային, այնպես էլ ընդհանուր տեսական առումով: Սահմանվում են դրական իրավական պատասխանատվության բնույթը և նշանակությունը, ցույց է տրվում և բացահայտվում է նրա հարաբերակցությունը «օրինական վարքագիծ», «իրավական պարտականություն», «պարտքի զգացում», «իրավահարաբերություն», «խրախուսանք», «իրավական կարգավիճակ» հասկացությունների հետ:

Աշխատանքում առաջարկվել է գիտական շրջանառության մեջ մտցնել իրավաբանական պատասխանատվության նոր հասկացությունն ու տեսակները, մշակվել է «Իրավաբանական պատասխանատվության» տեղեկատվական-որոնողական էլեկտրոնային համակարգը», որն ունի զգալի գործնական նշանակություն:

Գործող օրենսդրության վերլուծության արդյունքների հիման վրա հիմնավորվում է իրավաբանական պատասխանատվության իրականացման կամավոր ձևի իրավական բնույթը, ինչպես նաև իրավական պատասխանատվության երկու իրականացման ձևերը՝ կամավոր և պետական-հարկադրական, մեկ ամբողջական հասկացության մեջ համախմբելու հնարավորությունը և անհրաժեշտությունը:

Աշխատանքում բացահայտվում է իրավաբանական պատասխանատվության սկզբունքների, նպատակների և գործառույթների բովանդակային համապատասխանությունը (համարժեքությունը) մեզանում տեղի ունեցող արմատական փոփոխություններին:

Իրավաբանական պատասխանատվության հիմնախնդիրները սույն ատենախոսության մեջ դիտարկվում են տեսական գրականության և գործող օրենսդրության քննական վերլուծության հիման վրա:

Բացի դրանից աշխատանքում ներկայացվել է իրավաբանական պատասխանատվության հեղինակային մոտեցումը՝ արդի իրավակարգավորումների տեսանկյունից:

Հետազոտության գիտական նորույթի տարրեր են պարունակում նաև պաշտպանության ներկայացվող հետևյալ **հիմնական դրույթներում**.

1. Իրավաբանական պատասխանատվությունը նորմատիվ, երաշխավորված և պետության հարկադրանքով, համոզմունքով կամ խրախուսանքով ապահովված իրավունքի նորմերի իրականացմանը հետևելու և կատարելու իրավական պարտականություն է, որն իրականացվում է սուբյեկտների օրինական վարքագծով, խրախուսում և որին հավանություն է տալիս պետությունը, իսկ այն խախտելու դեպքում իրավախախտի նկատմամբ օրենքով սահմանված կարգով վրա են հասնում սահմանափակումներ, որոնք դրսևորվում են զրկանքների, հատուցումների և տարբեր տեսակի իրավական սանկցիաների ձևով:

2. Իրավաբանական պատասխանատվությունը՝ որպես սոցիալական պատասխանատվության տեսակ, հատուկ դերակատարում ունի հասարակության իրավական համակարգում՝ օրինականության պահպանման և իրավակարգի ամրապնդման խնդրում: Իրավաբանական պատասխանատվությունը որպես բարդ ու բազմաբնույթ իրավական ինստիտուտ՝ կոչված է պաշտպանելու անձի իրավունքներն ու օրինական շահերը, իսկ օրինազանցին ենթարկել նյութական և ոչ նյութական բնույթի սանկցիաների:

3. Իրավաբանական պատասխանատվության հասկացության սահմանման հետ համեմատության մեջ «իրավական պատասխանատվության միջոցներ» հասկացությանը գիտական գրականության մեջ հատկացվել է շատ քիչ ուշադրություն: Դրա տեսական անբավարար մշակվածությունը հանգեցրեց պետական հարկադրանքի այլ միջոցների հետ իրավաբանական պատասխանատվության միջոցների միահյուսմանը: Հաճախ իրավաբանական պատասխանատվության միջոցները նույնականացվում են իրավական նորմի սանկցիայի, իրավաբանական պատասխանատվության կամ պաշտպանության

միջոցների հետ, չնայած դրանք ինքնուրույն իրավական կաթեգորիաներ են: «Իրավաբանական պատասխանատվության միջոցներ» հասկացության սահմանման բարդությունը պայմանավորված է նաև նրանով, որ գործող օրենսդրության մեջ հաճախ կիրառվում է «պետական հարկադրանքի միջոցներ» եզրույթը, սակայն դրա բովանդակությունը չի բացահայտվում: Միննույն ժամանակ բազմաթիվ նորմատիվ իրավական ակտերում իրավաբանական պատասխանատվության և պետական հարկադրանքի այլ միջոցները ներառված են մեկ բաժնում, ինչը կարող է հանգեցնել դրանց միանման իրավական բնույթի վերաբերյալ պատրանքների:

4. Գիտական գրականության մեջ գոյություն ունեն իրավաբանական պատասխանատվության միջոցների սահմանման երկու մոտեցումներ: Առաջին դեպքում դրանք սահմանվում են «իրավական նորմի սանկցիա» միջանկյալ կաթեգորիայի միջոցով, հեղինակի կողմից դրանք դիտարկվում են «պետական հարկադրանքի միջոցներ» ընդհանուր հասկացության հետ մեկ շարքում: Երկրորդ դեպքում իրավաբանական պատասխանատվությունը դրսևորվում է որպես խախտված իրավունքների վերականգնողական միջոց, որն ըստ էության իրենից ներկայացնում է որպես ճշմարտության բացահայտում և արդարության հաստատում:

5. Աշխատանքում հիմնավորվում է այն տեսակետը, ըստ որի իրավաբանական պատասխանատվության էությունը չի հանգեցվում պետական հարկադրանքին, այլ՝ ձևավորվում է դրա իրականացման ընթացքում և ի հայտ է գալիս դրա առաջացման հիմք հանդիսացող իրավախախտման փաստը հաստատելուց հետո:

6. Հետազոտությունում իրավաբանական պատասխանատվության ճյուղային տեսակների հետ մեկտեղ առանձնացվում և մանրագնին հետազոտվում են իրավսվերականգնողական պատասխանատվությունը, պատժամիջոցային (սանկցիավորված) պատասխանատվությունը, նյութական պատասխանատվությունը և այլն, վերլուծվում է պատասխանատվության տվյալ տեսակների կիրառման փորձը:

7. Իրավաբանական պատասխանատվության միջճյուղային, համալիր կառույցը պայմանավորված է և գոյություն ունի երկու տեսակներում՝ միջճյուղային գործառնական և միջճյուղային սահմանային:

Մասնավորապես, եթե միջճյուղային, գործառնական կառույցներին բնորոշ է կայունությունն իրավունքի համակարգում, քանի որ դրանք պատասխանատվության

(սանկցիաների և խրախուսանքների) միջոցների օգնությամբ մոդելավորում են պատասխանատվության վիճակը, ապա սահմանային միջճյուղային կառույցի համար հնարավորություն կա կատարելագործել ու զարգացնել իրավունքի համակարգերը դինամիկ վիճակում:

8. Իրավակուսն հարաբերությունների կարգավորման կատարելագործումը պետք է ընթանա համաթույլատրելի կարգավորման մեթոդների ավելի լայն կիրառման ճանապարհով: Ընդ որում դրանք պետք է զուգակցվեն իրավակարգավորումների ոլորտում հստակ արգելքների հետ: Դրանով տարբերվում է վարքագծի սոցիալապես արդարացված ազատությունը, ինքնուրույնությունը, նախաձեռնությունը՝ բացասական երևույթներից՝ կամայականությունից, անօրինականությունից, հանցավորությունից: Թույլատվություններն ուղեկցվում են համապատասխան կարգավորումներով ու ձևերով, որոնք ապահովում են դրանց ամրապնդումն ու գործնական իրագործումը իրավական կարգավորման ոլորտում:

9. Իրավաբանական պատասխանատվության իրականացման կառուցակարգը նպատակահարմար է դիտարկել բարդ կառուցվածքային գործառույթային ձևավորման որակով, որը միավորում է ստատիկ (նորմատիվ, կազմակերպչական, գործիքակազմային) և դինամիկ (բովանդակային) բաղադրիչները: Տվյալ կառուցակարգն իր հերթին հանդիսանում է իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության ընդհանուր սկզբունքների կիրառման և իրավակարգավորումների արդյունավետության ապահովման գործիքակազմը:

10. Իրավաբանական պատասխանատվության իրականացման գործառույթային բաղադրիչն ունի երկակի բնույթ.

- ներհամակարգային գործունեություն, այսինքն՝ մեխանիզմի ներսում հարաբերություններ, որոնք կապված են այդ մեխանիզմի առանձին կառուցվածքային տարրերի փոխգործունեության հետ և կարգավորվում են իրավունքի համապատասխան նորմերով:

- արտաքին (նպատակային) գործունեություն, որն արտահայտվում է հասարակական հարաբերությունների վրա որոշակի կարգավորիչ-պաշտպանական ազդեցության իրականացման մեջ:

Իրավաբանական պատասխանատվության իրականացման գործառնական

կառուցակարգը (մեխանիզմը) նման ընկալումներում ենթադրում է իրավակիրառ հարաբերություններ, որոնք կողմնորոշված են որոշակի արդյունքների ձեռք բերմանը, ձևավորված կարգի կայունության և պաշտպանության ապահովմանը:

Ատենախոսության տեսական նշանակությունը. Հայաստանի Հանրապետությունում իրականացված և իրականացնող սահմանադրական և դատաիրավական բարեփոխումների ընթացքում ընդունվել և ընդունվելու են օրենսդրական և ենթաօրենսդրական բազմաթիվ ակտեր, որոնք առնչվում են իրավաբանական պատասխանատվությանը, սակայն իրավունքի տեսության կողմից դրանք չեն ենթարկվել խորքային տեսական վերլուծության: Այս տեսանկյունից ատենախոսության տեսական նշանակությունն այն է, որ գիտական հետազոտության առարկա է դարձել իրավաբանական պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը, բացահայտվել են օրենսդրական համակարգում և իրավակիրառ պրակտիկայում խնդրո առարկայի վերաբերյալ առկա հակասություններն ու բացերը և, դրանք շտկելու համար մշակվել են մի շարք առաջարկություններ, որոնք ունեն ոչ միայն տեսական, այլև գործնական-կիրառական նշանակություն:

Ատենախոսության գործնական նշանակությունն այն է, որ հեղինակի ներկայացրած առաջարկությունները կարող են կիրառվել իրավապահ մարմինների պրակտիկ աշխատանքում: Բացի դրանից, աշխատանքը կարող է օգտագործվել «Պետության և իրավունքի տեսություն» առարկայի գծով հատուկ դասընթացների ուսումնառության ժամանակ: Այն կարող է նաև օգտակար լինել սոցիալական և իրավաբանական պատասխանատվության վերաբերյալ հետազոտություններ կատարողների և պրակտիկ աշխատողների համար:

Ուսումնասիրության արդյունքների փորձարկումը. Աշխատանքն իրականացվել և քննարկվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում: Աշխատանքի առավել կարևոր դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի մի շարք գիտական հրապարակումներում:

Աշխատանքի կառուցվածքը. Սույն ատենախոսական աշխատանքը բաղկացած է, ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են յոթ ենթագլուխ, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքի հիմնական բովանդակությունը.

Աշխատանքի ներածական մասում հիմնավորվում է թեմայի հետազոտության արդիականությունը, նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսական աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլուխը՝ «Իրավաբանական պատասխանատվության ընդհանուր գիտատեսական հարցադրումներ և հայեցակարգային մոտեցումներ» վերտառությամբ բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ «Իրավաբանական պատասխանատվությունը որպես սոցիալական գոյի անհրաժեշտ պայման. հասկացությունը, էությունը և բնութագրական հատկանիշները» վերնագրով, հեղինակը բացահայտել է իրավաբանական պատասխանատվության էությունը, բնութագրական հատկանիշները և հայեցակարգային մոտեցումները:

«Պատասխանատվություն» եզրույթն ունի մի քանի արժեքների բազմաշերտ բովանդակություն և միավորում է զանազան սոցիալական և իրավական երևույթները: Համընդհանուր ընդունված է խոսել մարդու մասին, որ նա պատասխանատու է, եթե ունի պարտքի բարձր զգացողություն, խանդավառ է վերաբերվում սեփական պարտականություններին: «Պատասխանատու»՝ նշանակում է որևէ գործունեության իրականացման, գործերի ղեկավարման գործում իրավունքներով ու պարտականություններով օժտված:

Որպես սոցիալական պատասխանատվության տեսակ, իրավաբանական պատասխանատվությունը իրավունքի կազմակերպչական գործառույթի իրականացման էական ձևերից է: Հատկապես իրավական նորմերի խախտման համար պատասխանատվությունը «պսակում» է իրավունքի պաշտպանիչ մեխանիզմը, դարձնում այն տրամաբանորեն ավարտված և սոցիալապես արժեքավոր:

Պատասխանատվության ինստիտուտը կրում է օբյեկտիվ բնույթ, ամրագրված է նորմատիվ իրավական ակտերում և հանդիսանում է իրավաբանական պատասխանատվության իրականացման պոզիտիվ կամ նեգատիվ ասպեկտների արտաքին արտահայտման նախադրյալ:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Իրավաբանական պատասխանատվության ինստիտուտի տեղն իրավունքի տեսության համակարգում»** վերնագրով, հանգամանորեն վերլուծության է ենթարկվել պատասխանատվության ինստիտուտի տեղը իրավունքի տեսական հայեցակարգային ուսմունքներում: Խնդրո խնդրի վերլուծության արդյունքների հիման վրա, հեղինակը եզրակացնում է, որ ինչպես ճյուղային իրավաբանական ճյուղերում, այնպես էլ իրավունքի տեսության մեջ, իրավաբանական պատասխանատվության մեջ, իրավաբանական պատասխանատվության ինստիտուտը՝ իր սոցիալ-իրավական և գործնական նշանակությամբ, զբաղեցնում է կենտրոնական տեղ:

Առաջին գլխի երրորդ ենթագլխում՝ **«Իրավաբանական պատասխանատվությունը որպես իրավունքի միջճյուղային իրավական ինստիտուտ»** վերնագրով, հեղինակը հիմնավորում և համամիտ է այն հետազոտողների տեսակետների հետ, ըստ որի՝ իրավաբանական պատասխանատվությունը, լայն իմաստով, հանդիսանում է միջճյուղային իրավական ինստիտուտ:

Աշխատանքի երկրորդ գլխում՝ **«Իրավաբանական պատասխանատվության հիմքերը, դրական և հետադարձ պատասխանատվությունների առանձնահատկությունները»** վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Պատասխանատվության հիմքերը և դրանց առանձնահատկությունները իրավաբանական պատասխանատվության առանձին տեսակներում»** վերնագրով, հեղինակը համակողմանի քննարկում է իրավաբանական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և յուրաքանչյուր պատասխանատվության առանձնահատկությունները իրավունքի տարբեր ճյուղերում:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Դրական և հետադարձ պատասխանատվությունների առանձնահատկությունները համակարգային մոտեցման տեսանկյունից»** վերնագրով, հեղինակը համակողմանի քննարկում է պատասխանատվության երկու մոտեցումների՝ դրական (պոզիտիվ) և հետադարձ (նեգատիվ) իրավաբանական պատասխանատվությունների էությունը, բովանդակային առանձնահատկությունները և հետադարձ նպատակը:

Աշխատանքի երրորդ գլուխը՝ **«Իրավաբանական պատասխանատվության իրացման արդիական հիմնախնդիրները»** վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Իրավաբանական պատասխանատվության**

իրականացման խնդրահարույց հարցադրումները» վերնագրով, հեղինակը վերլուծության է ենթարկում իրավաբանական պատասխանատվության օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերը, սակայն դրանք դիտարկում է համակարգային փոխկապվածության և միասնության մեջ:

Աշխատանքի երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Իրավաբանական պատասխանատվություն տեղեկատվական-որոնողական էլեկտրոնային համակարգի» մշակման և ներդրման անհրաժեշտությունը»** վերնագրով, հեղինակը առաջարկում է ներդնել «Իրավաբանական պատասխանատվություն տեղեկատվական-որոնողական էլեկտրոնային համակարգի» մոդելավորումը՝ գործնական պրակտիկայում, որի անհրաժեշտությունը պայմանավորված է հասարակական կյանքի զարգացման և ժամանակակից տեղեկատվական-տեխնոլոգիական պահանջմունքներով: Այդ համակարգն, ըստ հեղինակի՝ իրենից ներկայացնում է կազմակերպչական-տեխնիկական, ալգորիթմային և լեզվաբանական միջոցների համախումբ, որը նախատեսված է իրավաբանական պատասխանատվության ոլորտում տեղեկատվության գործընթացների ավտոմատացման և տեղեկատվական անհրաժեշտ նյութերի ապահովման և դրանց իրականացման համար:

Եզրակացություններ

1. Ազգային իրավունքում իրավաբանական պատասխանատվությունն ուսումնասիրելու ժամանակ հնարավոր չէ զերծ մնալ սոցիալական պատասխանատվության հիմնախնդիրների բազմակողմանի վերլուծությունից, որն ունի երկու նշանակություն.

ա) պատասխանատվություն՝ իրավական նորմով նախատեսված պարտականությունը պատշաճ կատարելու համար,

բ) պատասխանատվություն՝ սոցիալական (իրավական) նորմերի պահանջները խախտելու համար, երբ սուբյեկտն ընտրում է վարքագծի այնպիսի տարբերակ, որը չի համապատասխանում նորմերի կարգադրություններին:

Առաջին տարբերակը ենթադրում է անձի կողմից հասարակության առջև սեփական պարտքի գիտակցումը և բնութագրվում է դրական իրավաբանական պատասխանատվության հասկացությամբ:

Երկրորդ տարբերակը, երբ իրավունքի պահանջները խախտվել են գիտակցաբար, ենթադրում է հետադարձ (ռետրոսպեկտիվ) պատասխանատվության առաջացում:

2. Ցանկացած իրավական դոկտրին մշակվում է համապատասխան նորմատիվ նյութի հիման վրա: Իրավունքի զարգացման հետ ի հայտ են գալիս նոր երևույթներ, որոնք նույնպես անվանվում են պատասխանատվություն, ձևավորվում են իրավունքի նոր ճյուղեր, որոնք ունեն իրավական կարգավորման իրենց բնորոշ առարկա, մեթոդ և, իբրև հետևանք, հատուկ պաշտպանիչ կառույցներ, որոնց յուրօրինակությունը «լրոզում է» իրավաբանական պատասխանատվության արդեն կայացած հասկացության կողմերը: Համապատասխանաբար «պատասխանատվություն» եզրույթն օգտագործվում է տարբեր իմաստներով:

Աշխատանքում հեղինակը իրավաբանական պատասխանատվությունը դիտարկում է դինամիկայում, որի էությունն է իրավական նորմի դիսպոզիցիայի ու սանկցիայի, պետական հարկադրանքի միջոցների փոխադարձ կապը:

3. Անցկացված վերլուծության արդյունքում պարզվել է, որ իրավաբանական պատասխանատվությունը բաժանվում է երկու հիմնական տեսակների՝ իրավավերականգնողական, այսինքն՝ ուղղված իրավական հարաբերությունների մասնակիցների իրավունքներին ու օրինական շահերին հասցված վնասի վերացմանը, և

պատժիչ (տուգանային), այսինքն որն ունի իրավախախտումների ընդհանուր և մասնավոր կանխարգելում:

4. Իրավաբանական պատասխանատվությունն օժտված է հետևյալ հատկանիշներով.

ա) իրավաբանական պատասխանատվությունը ենթադրում է պետական հարկադրանք,

բ) դա ոչ թե «ընդհանրապես» հարկադրանք է, այլ այդպիսի հարկադրանքի «չափ», դրա հստակ սահմանված ծավալ,

գ) իրավաբանական պատասխանատվությունը կապված է իրավախախտման հետ, հետևում է դրան և ուղղված է իրավախախտողին,

դ) պատասխանատվությունն իր հետ բերում է բացասական հետևանքներ (զրկանքներ) իրավախախտողի համար՝ նրա իրավունքների ոտնահարում, նրա նկատմամբ լրացուցիչ պարտականությունների սահմանում,

ե) զրկանքների բնույթն ու ծավալը սահմանված են իրավական նորմի սանկցիայում,

զ) զրկանքների սահմանումը, պետական հարկադրական միջոցների կիրառումն իրականացվում է իրավակիրառ գործունեության ընթացքում իրավասու պետական իրավասու մարմինների կողմից օրենքով սահմանված կարգով ու ձևով: Դատավարական ձևերից դուրս իրավաբանական պատասխանատվությունը հնարավոր չէ:

5. Անցնելով իրավաբանական պատասխանատվության ոլորտում ժամանակակից օրենսդրության համակարգային վերլուծությանը՝ հեղինակը նշում է, որ առաջին հերթին, անհրաժեշտ է լուսաբանել դրա որոշ հիմնախնդիրներն ընդհանուր առմամբ և հատկապես դրանք, որոնք վերաբերվում են դրա սոցիալական կողմին:

Խնդրահարույց են մնում, օրինակ, այնպիսի հարցերը, ինչպիսիք են դրական պատասխանատվության իրացումը ոչ միայն իրավական պարտականությունների կատարման ճանապարհով, այլև սեփական իրավունքների իրականացման ճանապարհով, սոցիալական պատասխանատվության շրջանակներում՝ իրավունքի սուբյեկտների պատասխանատու կախվածության հիմնախնդիրը:

6. Հետազոտման ընթացքում հեղինակի կողմից դրական պատասխանատվությունը դիտարկվել է երկու կողմերից՝ չափավոր, երբ պատասխանատվությունը դրսևորվում է բնականոն իրավական վարքագծի (կատարողականության) միջոցով և ակտիվ կողմի,

որտեղ այն դրսևորվում է սոցիալապես ակտիվ (նմուշային, օրինական) գործունեության միջոցով:

7. Դիտարկելով հետադարձ (ռետրոսպեկտիվ) պատասխանատվությունը, հեղինակը հանգում է այն եզրակացությանը, որ այն իրենից ներկայացնում է, մի կողմից, որոշակի սոցիալական եղանակով խախտողի պարտադրում (հասարակության, պետության կողմից և այլն) վերջինիս կողմից սոցիալական նորմերի պահպանմանը, և, մյուս կողմից, խախտողի ստորադասումն այս խախտմանը՝ կրելով օրենքով սահմանված որոշակի զրկանքներ:

Համապատասխանաբար, դիտարկվում են նաև պարտադրանքի երկու տեսակները՝ նորմատիվ պահանջների կատարման պարտադրանք և իրավունքի նորմերով սահմանված բացասական հետևանքների (տարբեր տեսակի զրկանքների) պարտադրանք: Պարտադրանքի առաջին տեսակն իրենից ներկայացնում է ռետրոսպեկտիվ իրավաբանական պատասխանատվության նպատակը: Երկրորդը՝ այն եղանակը, որի միջոցով իրագործվում է պատասխանատվության սոցիալական նշանակությունը:

8. Հարկադիր իրավաբանական պատասխանատվության մասին ժամանակակից օրենսդրության անցկացված վերլուծության արդյունք է դարձել եզրակացությունն այն մասին, որ դրան բնորոշ է իրավաչափ (պատասխանատու) վարքագծին հարկադրելու վիճակը, որը նվաճվում է անբարենպաստ հետևանքներ կրելու օգնությամբ, որի վերադրումը կապված է որոշակի անձանց մեղսագրվող, մեղավոր ու հակաիրավական (անպատասխանատու) վարքագծի հետ: Հարկադիր իրավաբանական պատասխանատվության վերջնանպատակն է դաստիարակել իրավախախտներին գործող օրենքների պահպանման ոգով, ինչպես նաև՝ այս կամ այն անձանց կողմից նոր հակաիրավական արարքների կատարման կանխարգելումը:

9. Աշխատանքում ձևակերպված հաջորդ եզրակացությունը կայանում է նրանում, որ իրավաբանական պատասխանատվության դոկտրինալ ընկալումն ու դրա նորմատիվ ամրապնդումը գտնվում են որոշակի հակասության մեջ, դա է իրավունքի տեսության հիմնական հիմնախնդիրը, որը կարող է հանվել օրենսդրության բարեփոխմամբ: Սակայն բարեփոխման գործընթացն ինքնին բարդ է ու երկարատև, շատ ավելի արդյունավետ կերպով կարելի է ներգործել իրավակիրառության գործընթացի վրա, որն

իրավաբանական գործունեության առավել տարածված ձևերից մեկն ապահովում է իրավական նորմերի իրացումը գործնականում և որից մեծապես կախված է հասարակության, պետական կառույցների և ընդհանուր առմամբ իրավական համակարգի բնականոն գործառնությունը:

10. Մեր հասարակության իրավական հենքի հետ ներկայումս գոյություն ունեցող իրավիճակը բազմաթիվ խնդիրներ է ստեղծում պրակտիկ իրավաբանների համար: Էլ ավելի շատ խնդիրներ ունեն օգտագործող քաղաքացիները: Անցան օրենսդրական հենքի հարաբերական անփոփոխության տարիները, և այսօր որևէ իրավական փաստաթղթերի համապատասխան խմբագրությունների որոնումը կարևորագույն հարց է բոլոր գործող իրավաբանների համար, չէ որ ամեն օր կիրառվում են փոփոխություններ ու ուղղումներ օրենքների, հրամանների և այլնի նկատմամբ: Եվ եթե այդ ժամանակ գործող օրենսդրությունը, հիմնականում, հրապարակվում է մասնագիտացված պաշտոնական տեղեկագրում, ապա անհրաժեշտ վարչական ենթաօրենսդրական ակտերի որոնումը խիստ դժվարացած է:

Այս, ինչպես նաև բազմաթիվ այլ հիմնախնդիրների լուծման գործում մեծ դեր պետք է հատկացվի տեղեկատվական ապահովման ավտոմատացմանը, և մասնավորապես անբաժանելի ու առաջնահերթ տարրին՝ տեղեկատվական-որոնողական էլեկտրոնային համակարգերին:

Հեղինակի կողմից առաջարկված «Իրավաբանական պատասխանատվություն» ՏՈԷՀ-ն օգտատիրոջը հնարավորություն կընձեռի ժամանակին հետևել հետաքրքրող նորմատիվ ակտերի նորագույն խմբագրությունները, հնարավորություն կտրամադրի անհրաժեշտության դեպքում իր տրամադրության տակ ձեռքբերել դրանց բոլոր նախորդ խմբագրությունները և դրանով իսկ կապահովի իրավակիրառ գործընթացի բնականոն աշխատանքը:

Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի

հետևյալ գիտական հրատարակումներում.

Մենագրություններ և գիտական հոդվածներ

1. Իրավաբանական պատասխանատվության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում: Երևան, Եվրոպրինտ, 2019, 272 էջ (մենագրություն):
2. Իրավաբանական պատասխանատվության իրացման հիմնախնդիրները: Երևան, Եվրոպրինտ, 2019, 128 էջ, (մենագրություն):
3. Իրավաբանական պատասխանատվության սկզբունքները: Երևան, Եվրոպրինտ, 2016, 72 էջ (մենագրություն):
4. Իրավաբանական պատասխանատվության տեսակները: Երևան, Եվրոպրինտ, 2016, 44 էջ (մենագրություն):
5. Իրավախախտում և իրավաբանական պատասխանատվություն // Արդարադատություն, 2017, № 35, էջ 30-35:
6. Իրավաբանական պատասխանատվության դասակարգման հիմնախնդիրը // Արդարադատություն, 2017, № 36, էջ 24-28:
7. Իրավաբանական պատասխանատվություն, օրինականություն և իրավակարգ. փոխհարաբերակցության հիմնախնդիրները // Արդարադատություն, 2017, № 37, էջ 24-27:
8. Իրավաբանական պատասխանատվություն. հասկացությունը և դրա հատկանիշները // «Օրինականություն», ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես: № 121, 2021, էջ 42-46, 82-83:

Резюме

Овсепян Ванине Жораевна

Проблемы юридической ответственности в контексте конституционных и законодательных изменений

(общетеоретический анализ)

Актуальность данного диссертационного исследования обусловлена коронными социально-политическими и конституционно-правовыми изменениями в Республике Армения, а также особой ролью юридической ответственности в национальной правовой системе.

В связи с этим возникает необходимость совершенствования института юридической ответственности для обретения им современного облика, соответствующего общемировому. И это, особенно актуально в связи с тем, что юридическая ответственность представляет собой особую разновидность социальной ответственности, проявляющейся в различных областях человеческой жизни.

Данное диссертационное исследование нацелено на комплексное, взаимосвязанное исследование теоретических проблем юридической ответственности в условиях, осуществляемых в нашей стране реформ, перевода юридической теории и практики в качественно новое состояние.

Научная новизна данной диссертации выражается в том, что на общетеоретическом уровне обстоятельно изучаются проблемы и основы концептуально-теоретических подходов к выявлению сущности юридической ответственности, указывается роль и значение данного института в правовой системе РА. Научная новизна также определяется в глубинном исследовании теоретических проблем, касающихся юридической ответственности в национальном праве, содержанием ряда концептуальных положений, и рекомендаций относительно рассматриваемых проблем юридической ответственности.

В диссертации раскрыто понятие и сущность юридической ответственности на основе анализа и обобщения различных подходов к ее понятию, в рамках теории права, на основе чего дается собственное определение юридической ответственности.

На основе разработанной теоретической модели юридической ответственности, автор предлагает принять Закон “О юридической ответственности”.

Диссертантом особенно отмечается, что юридическая ответственность - это сложное многоплановое правовое явление, которое автор исследует с точки зрения позитивного и ретроспективного аспектов. В частности, отмечается, что до настоящего времени не выработано четкого определения юридической ответственности и ее признаков, в связи с чем автор предлагает собственное определение юридической ответственности в национальном праве: юридическая ответственность - это правовое явление, рассматриваемое в динамике, имеющее своей сутью взаимосвязь диспозиции и санкции правовой нормы, позитивной ответственности, мер государственного принуждения, обеспечивающих должное поведение физических лиц и ответственность юридических лиц. Одновременно исследуются присущие юридической ответственности исходные качественные признаки, анализируются ее свойства и особенности.

Теоретическая значимость работы состоит в обобщении опыта исследования проблем юридической ответственности в теории государства и права. Это позволяет автору вынести на обсуждение положения, имеющие определенное значение для юридической науки, разработана информационно-поисковая система "Юридическая ответственность", имеющая не только научно-познавательное, но и практико-прикладное значение.

Научная значимость проведенного исследования определяется, прежде всего, научно-познавательным значением и расширяет теоретико-правовые представления о юридической ответственности, как об особом институте в системе юридических наук. Разработанные положения и выводы могут быть использованы при определении оптимальных целей и задач правового регулирования в сфере юридической ответственности и совершенствования действующего законодательства.

Полученные в ходе диссертационного исследования результаты, могут быть применимы в преподавании теории государства и права, и других юридических дисциплин.

Vanine Hovsepyan Zhora

**The Issues of Legal Liability in the Context of Constitutional and Legislative
Changes (General Theoretical Analysis)**

Summary

The relevance of this dissertation research is due to fundamental socio-political and constitutional-legal changes in the Republic of Armenia, as well as the special role of legal responsibility in the national legal system. In this regard, there is a need to improve the institution of legal responsibility in order to acquire a modern look that corresponds to the global one. And this is especially true in connection with the fact that legal responsibility is a special kind of social responsibility that manifests itself in various areas of human life.

This dissertation research is aimed at a comprehensive, interrelated study of the theoretical problems of legal responsibility in the context of the reforms being carried out in our country, and the transfer of legal theory and practice into a qualitatively new state.

The scientific novelty of this dissertation is expressed in the fact that at the general theoretical level the problems and the fundamentals of conceptual and theoretical approaches to identifying the essence of the legal responsibility of this institution in the RA legal system are thoroughly studied. Scientific novelty is also determined in an in-depth study of theoretical problems relating to legal responsibility in national law, as well as in the content of a number of conceptual provisions and recommendations regarding the issues of legal liability considered.

The dissertation discloses the concept and essence of legal responsibility on the basis of analysis and generalization of various approaches to its concept in the framework of legal theory, on the basis of which an own definition of legal responsibility is given.

A theoretical model of legal responsibility has been developed, on the basis of which the author proposes to adopt the Law “On Legal Responsibility”.

The dissertation emphasizes that legal responsibility is a complex multifaceted legal phenomenon that the author explores from the point of view of positive and retrospective aspects. In particular, it is noted that, until now, a clear definition of legal liability and its features has not been developed, in connection with which the author offers his own

definition of legal liability in national law: legal liability is a legal phenomenon that is considered in dynamics, which has the essence of the relationship between disposition and positive sanctions.

The author of the present thesis strived not only to summarize the achievements already existing in the science on the considered issues, but also to suggest solutions to a number of problems of the theory and practice of legal liability, being based on the current legislation, the practice of judicial and other law enforcement bodies on the implementation of the norms of the law related to the legal liability.

The practical importance of the work lies in the fact that recommendations and conclusions contained therein can find practical application in law-making, law-enforcement and law-enforcement activities.

A handwritten signature in blue ink, appearing to be 'P. Shumakov', written in a cursive style.